

դուրս ցըցուած է, նոյնպէս նաև բերանն նեղ է աւելի: Մօրոքն՝ այտերէն, շրթոնքներէն ու կզակէն վար մինչև կուրծքը կ'իջնայ: Գլուխը մեղմով մը դէպ 'ի մէկ կողմ զարձուցած է, իբր ժողովուրդը դիտելու և ահեղու սպառնալից նայուածքով զինքը սանձելու կերպի մէջ. կ'երեայ որ քիչ մը վերջը՝ փայլակի, որոտման աւ մրրիկի պէս իսրայէլեան անսաստ ժողովրդեան վրայ պիտի թափէ իր բարկութիւնը: Միով բանիւ, իրաւամբք Մովսէսն՝ Փլորենտեան մեծ վարժապետին զլուխ գործոցն համարուած է:

Միքելանձելոյ Պուռնարողդի մեծքան դակագործ, նկարիչ և ճարտարապետ, և որ քան զամեն բան վեր է, առաքինի քաղաքացի մը եղաւ, և ոչ միայն խաղաղութեան արուեստով, այլ և պատերազմի ժամանակ՝ իր քաջութեամբն օգնեց հայրեննեաց: Իր չքեչ ձեռագործներն այնշափ հրոշակ հանած են աշխարհիս ամեն դին, որ չկայ ճանապարհորդ մը որ չփափաքի ու չբնտոէ անոր ձեռաց արդիւնքներն տեսնել և անոնց գեղեցկութեամբն զմայլիլ: Միքելանձելոյ Պուռնարողդի իրաւամբ իտալիոյ չքեղագոյն փառքերէն մէկն է:

Հարամանին: Քիչ մնաց մեզի հոն տեղը ձախորդ խաղ մը կը խաղար: Չըլլայ որ, տէրս, քու բժշկականութեամբդ անոր համբաւը վտանգի մէջ դրած ըլլաս:

— Իրաւցընէ, ըսաւ որսորդը, այդ Քաղէնի սուլզանը ովկ էր:

— Եեր զինարբու մը կիսով չափ մեռեալ, պատասխանեց տոքդորը, որուն կորուստը շատ զգալի պիտոր չըլլայ: Սակայն այս բանիս բարոյականը այս է, որ փառքը անցաւոր է, և անոնց շատ կապուելու չէ:

— Շատ դէշ, պատասխանեց ձոյ. ատիկայ ինծի շատ ախորժելի էր: Երկըրագութիւն ընդունիլ. ըստ քմաց երկնային ըլլալ: Բայց ինչ կ'ուղես. լուսինը երեան ելաւ, կարմիր և բոլորովին կարմիր, որ բարկացած ըլլալուն նշան էր:

Այս և ասոր նման խօսակցութեանց ժամանակ, որոնցմով ձոյ գիշերային աստղին վրայ բոլորովին նոր եղանակու իր գիտողութիւնները ըրաւ, երկինքը հիւսիսային դին թանձր ամպերով կը դիզուէր, չարագոյժ ու թանձր ամպեր. բաւական սաստիկ քամի մը, գետնէն երեք հարիւր ուաք բարձրութեամբ ամբարած, զվիկտորիան դէպ 'ի հիւսիս-հիւսիս-արևելք կը մղէր. իր վրայէն կապտագոյն կամարը պարզ ու ջինջ էր, սակայն ծանրութիւն մը կ'աղգէր:

Ճանապարհորդք իրիկուան ժամը ութին երկայնութեան 32°, 44'. կը զըտնուէին, և լայնութեան 4°, 17'. մըթնուրածի հոսանքները, մօտալուտ փոխորկի մը ազգեցութեամբ, առ ժամ երեսունէն մինչև երեսունուհինդ մղոն երագութեամբ կը քշէին զիրենք: Իրենց ոտից ներքեւ Մֆուգոյի անհարժեարգասաւոր դաշտերը արագաբար կը սահէին: Տեսարանը հիանալի էր, ուստի և ճանապարհորդք հիացմամբ դիտեցին զայն:

— Բուն լուսնի աշխարհին մէջ ենք, ըսաւ տոքդոր միէրկըսն, վասն զի այդ անունը հնուցմէն առած ըլլալով ցայսօր պահած է. անշուշտ անոր համար

## ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷջ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ  
ՅԱԳՐԻԿ

(Տես Երես 345)

ԳԼՈՒԽ ԺԶ.

Փորորկի եշանեներ. — Լուսեին երկիրը. — Ափրիկեան երկրին ապագային. — Վերջին ժամուն մերենեայն. — Արևմտին ատևն երկրին տեսարանը. — Տնկարանուրիւն և կենդանարանուրիւն. — Փորորիկը. — Իրակ գօտին. — Աստղագարդ երկինքը:

— Ահաւասիկ ինչ ըսել է, ըսաւ ձոյ, լուսնի որդիք ձևանալ առանց անոր

որ հոս ամեն ատեն լուսնին պաշտօն մատուցած են : իրաւցընէ սքանչելի երկիր մըն է :

— Դժուարաւ կրնայ լաւագոյն բուսականութիւն մը գտնուիլ :

— Եթէ լոնտրայու շրջակայքը զըտնուէր՝ բնական չէր ըլլար, ըսաւ ձ՛ոյ . տակայն շատ ախորժելի բան կ'ըլլար : ինչու համար այդ գեղեցիկ բանները ասանկ բարբարոս երկիրներու պահուած են :

— Կարելի է արդեօք գիտնալ, պատասխանեց տոքդորը, եթէ որ մը այդ երկիրը քաղաքականութեան կեղրոնը պիտոր չըլլայ : Թերևս ապագայ ժողովութները հոն դիմեն՝ երբ Եւրոպայի գաւառները իրենց բնակիչը սնուցանելու ուժերնին սպառեցընեն :

— Այդ բանին հաւատք կու տաս, ըսաւ Քէննըտի :

— Անտարակոյս, սիրեցեալդ Տիք : Դիտէ գիպաց ընթաքքը . քննէ ժողովը զըտնոց շարունակեալ գաղթականութիւնները, և կը տեսնես որ դու ալ իմ բերած հետեանքիս կու գաս : Ասիան աշխարհիս առաջին դայեակն է, իրաւ չէ : Գուցէ չորս հազար տարուան միջոց կ'աշխատի, կը բեղնաւորի, բերք կը բուսցընէ . և յետոյ երբ այն տեղուը Հոմերի սոկեփայլ հունձք կ'աճէին՝ քարեր կը սկսին բուսնիլ, անոր որդիքը այն սպառած ու թառամեալ ծոցը կը բքանեն : Այն ատեն կը տեսնես զանոնք որ Եւրոպա կը նետուին, այն դեռ մատղաշ ու զօրաւոր Եւրոպան, որ զանոնք երկու հազար տարիէ 'ի վեր կը սնուցանէ : Սակայն իր արգասաւորութիւնը արդէն սկսած է տկարանալ . իր պտղաբերիչ կարողութիւնները որ օրուան վըրայ կը նոււազին . այն նորանոր հիւանդութիւնները՝ որոնցմով ամեն տարի երկրին բերքերը կը զարնուին, այն անկանոն հունձքը, այն անբաւական միջոցները, բոլոր ասոնք յայտնի նշան են որ կենսականութիւնը կ'այլայի և ուժը սպառելու մօտ է : Անոր համար ալ կը տեսնենք որ ժողովուրդները Ամերիկայի սննդարար աղբիւրները կը դիմեն, ոչ

իրը առ անսպառելի տղբիւր մը, այլ իրը դեռ ևս ոչ սպառեալ : Սակայն ժամանակ պիտոր գայ որ այդ նոր աշխարհն ալ ծերանայ պիտի . անոր կոյս անտառները ճարտարութեան կացնին տակը պիտոր իյնան . գետինը շատ պտղաբերելու բոնադատուելով՝ տկարանայ պիտի : Ուր տարիին երկու հունձք միայն կը բուսնէին, հազիւ թէ մէկ մը միայն կարենայ պիտի բուսնիլ այն ուժէ սպառած հողերուն վրայ : Այն ատեն Ափրիկէ այնչափ դարերէ 'ի վեր ծոցը կրած գանձերը՝ նոր ժողովրդոց առջին պիտոր զնէ : Այս կլիմաները որ արդ մահագոյժ են օտարաց, վոփոխ մշակութեամբ մաքրուին զտուին պիտի . բոլոր այն ցիրուցան ջրերը՝ հասարակաց անկողնի մը մէջ ամփոփուելով՝ նաւարկելի երակ մը ձեսցընեն պիտի : Եւ այս երկիրը՝ որուն վրայ հիմա կը սաւառնինք, միւսներէն աւելի արգաւանդ, աւելի ճոխ, և աւելի քաջառողջ գտնուելով, մեծ թագաւորութիւն մը պիտոր ըլլայ, ուր անանկ գիւտեր երեւան գան պիտի, որ աւելի զարմանալի ըլլան՝ քան զշողին և զելեքտրականութիւն :

— Ա՞հ, պարոն, ըսաւ ձ՛ոյ, կ'ուզէի տեսնալ ատիկայ :

— Դու շատ կանուխ ելեր ես, տղաս :

— Սակայն, ըսաւ Քէննըգի, թերևս շատ ձանձրալի ժամանակ մը ըլլայ այն՝ երբ ճարտարութիւնը ամենայն բան իր օգտին ընկղմէ : Շարունակ մեքենայ հնարելով, մարդիկ վերջապէս անոնցմէ սպառին պիտի : Մտածութեանս նիւթեղած է միշտ, թէ աշխարհիս վերջին օրը այն պիտոր ըլլայ, երբ ահաւոր մեծութեամբ կախմայ մը երկեք երկմիլիոն մթնոլորսի ուժով ջերմացուելով՝ մեր երկրագունտը երկինք պիտոր հանէ :

— Եւ ես այս կ'ըսեմ, ըսաւ ձ՛ոյ, որ այդ մեքենային վրայ աշխատովներուն ետքինները Ամերիկայիք պիտոր չըլլան :

— Իրաւցընէ, պատասխանեց տոքդորը, Ամերիկայիք մեծ կաթսայագործեն : Բայց անօգուտ է ասանկ հակաճառութեանց մէջ ընկղմենք զմեզ . զիտենք

այդ լուսնի երկիրը որ հիմա մեր առջին ունենալու բաղդն ունինք :

Արևը՝ բարդած ամպերուն բազմութեանը վրայ իր վերջին ճառագայթները սահեցընելով գետնին պղտի խորտարորտութիւններն ալ ոսկէգոյն երանգով մը կ'օծէր . հսկայածն ծառեր, թփակերպ խոտեր, գետնաքարչ մամուռներ, ամենը առ հասարակ այս լուսաւոր բղխումէն իրենց մասն ունէին . գետինը ելեէջներով թեթև մը ծփծփալով, ասդիս անդին պղտի կոնաւոր բլրակներ կը ցըցէր . հորիզոնին վրայ լեռներ չկար . ահազին մացառախիտ պատնէշք, անթափանցելի ցանկապատք, փշալից թփուտք՝ այն լուսամուտքը, որոնց մէջ բազմաթիւ գեղեր կը տեսնուէին, մէկմէկէ կը բաժնէին . հսկայակերպ երփորպեայք իրը բնական պատնէշք զանոնք կը շրջապատէին, թփոց բատանման ճիւղերուն հետ խառնուելով :

Յետոյ Մալակազարին, որ Դանկանայիքա լճին մէջ գլխաւոր հոսող գետն է, կանաչազգեստ կոշտերուն միջէն սկսաւ սողալ . բոլոր այն բազմաթիւ առուակները, որ յորդութեանց ժամանակը հեղեղատներուն աճելէն կը ծագէին, և կամ գետնին կաւային խաւին մէջ փորուած լճերէն առաջ կու դային, ինքը իր մէջ կ'ընդունէր : Բարձրէն դիտողին, ասոնք ամենը ջրվէժներու ցանց մը կ'երենար՝ երկրին բոլոր արևմտեան երեսին վրայ նետուած :

Մեծ սապատողն կենդանիք կը տեսնուէին՝ որ այն պարարտ մարգագետիններուն մէջ արածելով յաղթահասակ խոտերու տակ կը ծածկուէին . անտառները իրենց շքեղ ծառերովը, ինչպէս մեծ փունջեր՝ ացքերնուն կը ներկայանային . սակայն այն փունջերը, առիւծներուն, ընձառիւծոց, բորենեաց, վազերց, ապաստանարան էին, որոնք ցորեկուան վերջին ջերմութենէն աղատելու համար հոն կը դիմէին : Մերթ ընդմերթ փիղ մը կը տեսնուէր որ ծառակոյտից դազաթները կը ցնցէր, և նաև ծառոց կոտրտուելուն ձայնը կը լսուէր՝

որ անոր փղոսկրեայ ատամանց բռնութեանը տեղիք կու տային :

— Ի՞նչ աղէկ երկիր որսորդութիւն ընելու, կանչեց քէննըտի ոգեորած . գնտակ մը որ ըստ դիպաց անտառին մէջ արձրկուի, իրեն արժանի որսի մը կրնայ հանդիպիլ : Արդեօք այդ բանը փորձելը կարելի չէ :

— Ոչ երբեք, սիրելիդ Տիք . ահա գիշերը գալու վրայ է, գիշեր մը սպառնալից, փոթորիկը իր ետեէն ձգելով : Արդ փոթորիկները ահաւոր են այս երկրիս վրայ, ուր ջերմացած գետինը ահազին ելեքտրական բարդի մը կը նըմանի :

— Իրաւունք ունիս, պարոն, ըսաւ ձայ . ջերմութիւնը շատ խղդուկ եղեր է, և հողն ալ բոլորովին դադրեր է . Կիմացուի որ բան մը հանդիպելու կը պատրաստուի :

— Մթնոլորտը ելեքտրականութեամբ լցուած է, պատասխանեց տղբորը . ամենայն կենդանի էակ կը զգայ այդ օդուն վիճակը՝ որ տարերց կուուին յառաջընթաց նշան մըն է, և ես իսկ կը խոստովանիմ որ երբեք այս աստիճանի ելեքտրականութեամբ չեմ տոգորուած :

— Աղէկ ուրեմն, ըսաւ որսորդը, միթէ իջնալու չե՞նք :

— Ընդհակառակն, Տիք, լաւագոյն կը սեպեմ բարձրանալ . միայն թէ կը վախնամ չըլլայ թէ ճամբէս գուրս նետուիմ այս մթնոլորտի այլ և այլ ուղղութեամբ չնշած հոսանքներէն :

— Արդեօք ծովեղերքէն 'ի վեր բրոնած ուղղութիւննիս փոխել կ'ուզես :

— Եթէ այդ կարելի ըլլայ, պատասխանեց Ֆէրկըսըն, եօթը կամ ութ աստիճանի չափ աւելի գէպ ուղիղ հիւսիսակողմը կ'ուզեմերթալ . գէպ 'ի նեղոսի ակունքը կարծուած լայնութինները կ'ուզեմ ելլելու փորձ փորձել . թերեւս յաջողինք Արկք գնդապետին արշաւանաց հետքը նշմարելու, և կամ նաև Պարոն Հայկինին կարաւանը տեսնելու : Եթէ ճիշտ են հաշիւներս, հիմա 32° 40' լայնութեան տակը կը գտնուինք, և ես շի-

տակ հասարակածէն անդին ելլել կ'ու-  
զեմ:

— Տես, նայէ, կանչեց քէննըտի, իր  
ընկերոջ խօսքը կտրելով, տես այն ձիա-  
գետիները որ լճերէն դուրս կ'ելլեն,  
այն արիւներանդ մսի զանգուածները,  
և այն կոկորդիլուսներն որ աղմկաւ օդը  
կը չնչեն:

— Կը խղդուին, ըստ ձոյ: Ո'վ, ի՞նչ  
պանչելի միջոց ճանապարհորդելու, և  
ի՞նչպէս կ'արհամարհէ մարդ բոլոր այդ  
մշասակար ճճիները: Պարոն քէննըտի.  
տեսէք այդ կենդանեաց խումբերը որ  
խունած կարգով կը քալեն: Երկու հա-  
րիւրի չափ կան. գայլ են:

— Ոչ, ձոյ, վայրենի շուներ են. հըռ-  
չակաւոր տեսակ մընէ, որ առիւծներու  
վրայ ալ յարձըկելու վախ չունի: ձա-  
նապարհորդ մը ասկէ աւելի ահաւոր  
բանի հանդիպիլ չկրնար. անմիջապէս  
կտոր կտոր կ'ընեն զինքը:

— Շատ աղէկ. Ճոյ չըլլայ պիտի որ  
յանձն առնու անոնց ցոկին բազը ան-  
ցընելու, պատասխանեց սիրուն պա-  
տանին: Սակայն եթէ բնաւորութիւն-  
նին ասանկ է, ատոր համար զիրենք  
արհամարհելու չէ:

Փոթորկին աղղեցութեամբը հետ-  
դէտէ լուութիւնը կը տիրէր. կարծես  
թէ թանձրացած օդը հնչիւնը փոխան-  
ցելու անկարող կ'ըլլար. անանկ մը  
կ'երևար ինչպէս թէ մինոլորտը բամ-  
բակով պատած ըլլար, և ի՞նչպէս կեր-  
պասներով ծածկած սենեակ մը՝ ամե-  
նայն ձայնահանութիւնը կը կորսընցընէր:  
Թիավար թռչունը, կատարաւոր կը-  
ունեն, կարմիր ու կապուտ անձեղ-  
ները, խեղկատակը, ճանճորսիկները,  
մեծ ծառերու մէջ անյայտ կ'ըլլային:  
Ողջոյն բնութիւնը մօտալուա ջրհեղեղի  
մը նշանները կ'երևցընէր:

Իլ շարունակուի:

## ԲԱՆԱԼԻՔ

### ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՆԻԹԻՑ

(Տես երես 351)

611 Հապա չիկրնար հաւասարապէս ծա-  
ւալիլ բաժակին վերի մասն ալ: — Ոչ.  
որովհետեւ ապակին յաւ հաղորդիչ չէ ջեր-  
մութեան. և ինչուան որ եռացեալ ջրոյն  
տաքութիւնն հաւասարապէս տարածուի  
ապակիին ամեն հիւէններուն վրայ՝ ասի-  
կայ կը կոտրի:

(Նոյն պատճառաւ կը կոտրին նաև յախ-  
ճապակեայ սկահակներն <sup>1</sup> ալ):

612 Ինչո՞ւ համար շատ անգամ ապա-  
կեայ խողովակներն եթէ կրակին բռնութին  
կը կոտրին: — կամ անոր համար որ նոյն  
ապակոյն մէջ օդի պղպջակ մը կայ, կամ  
անոր համար որ իրենց հաստութիւնն հա-  
ւասար չէ ամեն կողմն ալ:

613 Ինչո՞ւ ապակիին մէջ պղարունա-  
կուած օդն զոյն կը կոտրէ: — Որովհետեւ  
օդն ապակիին աւելի շուտով կը ծաւալի,

և աղղելով ճնշում մը պղպջակին չորս  
կողմերուն՝ կը կոտրէ զանոնք, հետեւ-  
բար նաև խողովակն ալ:

614 Ինչո՞ւ համար նաև եթէ խողովակին  
հաստութիւնն հաւասար չըլլայ՝ կը կոտրի: —  
Որովհետեւ բարակ կողմերն հաստերէն  
աւելի շուտ կ'ընդլայնին, և այս ծաւալման  
տարբերութիւնն կը պատճառէ խողովա-  
կին ճաթիլը:

615 Ինչո՞ւ համար կրակին դրուած հաստ  
ապակի մը՝ բարակէն աւելի շուտով կը  
կոտրի: — Որովհետեւ հաստին մէջ ընդ-  
լայնումն հաւասարապէս չէ, ասով կը  
հետեւի հակառակութիւն մը ուժերու՝ որ  
զայն կը կոտրեն:

Տ. Ե. — Փոփոխութեամբ վիճակի՝  
չերմուրքեամբ.

Ա. — Հաստատուն մարմինք, հեղուկը  
և օդակերպը:

616 Ի՞նչ կ'իմացուի մարմնոյ մը հիւէ ը-  
սելով: — Հիւէ ըսելով կ'իմացուի այն  
մասն՝ որ որ և իցէ մարմնոյ մը նիւթին վեր-  
ջին բաժանմանէն առաջ գայ. թէպէտե

<sup>1</sup> Ֆիւճան: